

ԱԼԻՇԱՆԻ «ՍԻՍՈՒԱՆ» Ը

Հ. Ղ. Ալիշանի հեղինակած պատմական եւ բանասիրական ուսումնասիրութիւններէն՝ զիս աւելի մօտէն հետաքրքրողները եղած են իր երկու ծանօթ գիրքերը «Սիսուան» եւ «Շնորհալի եւ պարագայ իւր» անոման հատորները:

Ալիշանի փառքն է եւ իր ստեղծագործական անմեկնելի շնորհն է, տեղագրական ու աշխարհագրական արժէքաւոր տեղեկութիւններու հաւաքումը, պրպտումները, որոնց շնորհիւ կորուստէ փրկուեցան հայ աշխարհի պատմական վայրերուն, վանքերուն, աւաններուն ու բերդերուն տեղանունները, եւ մանաւանդ անոնց գիրքորոշումները:

Նկատի պէտք է ունենալ սա որոշ պարագան՝ թէ Ալիշան անձնապէս չէ՛ պտրտած ու չէ՛ հետազոտած, ոչ Հայաստանը եւ ոչ Կիլիկիան, այլ թղթակցութեամբ ծանօթութիւններ հաւաքած է անհատներէ՝ պատմական վայրերու մասին, եւ յետոյ զանոնք վերլուծելով դասաւորած, և իւրաքանչիւր մարդարէական անհասանելի շունչով մը՝ ճշգրտօրէն սրբադրած է թղթակցութեամբ իրեն ներկայացուածները, տալով մի միայն իրականը ու իրաւը՝ տեղագրական մարդին մէջ, ինչ որ ներշնչումի եւ հայրենասիրական զգացումի օրինակելի պարագայ մըն է:

«Սիսուան» հսկայ հատորին պատրաստութեան մէջ՝ Ալիշան սպառեց բոլոր տեղեկութիւնները, սկսեալ Կիլիկիոյ նախքան հայկական հող դառնալէն՝ մինչեւ հայկական պետութեան վերջ գտնելը: Ան եւրոպական մէկէ աւելի մատենադարաններու մէջ պրպտումներ կատարած է: Ձեռք անցուցած է նոյնիսկ ամենաչնչին տեղեկութիւնները՝ որոնք կրնային օգտակար ըլլալ իր հսկայ աշխատութեան:

Կարգացած է օտար հեղինակներու Կիլիկիոյ մասին գրածները, որոնցմէ շատերը ականատեսի վկայութիւններով պատմադրած են դէմքեր ու դէպքեր՝ որոնք չահեկան կրնային դառնալ իր մըտադրած գրքին համար:

«Սիսուան»ի մէջ ունինք «քուսացուցակ գաւուց Կիլիկիոյ» անուան տակ՝ Կիլիկիոյ բոյսերու ընդարձակ ցուցակ մը: Բոյսերու լատիներէն բառերու դիմաց՝ դրուած է հայերէնը: Նոյնպէս «Կեմքանիք» գլխուն տակ տրուած է բոլոր տեսակի կենդանիներու անունները, որոնք կ'ապրէին Կիլիկիոյ հողին վրայ:

Միայն «Սիսուան»ի այս երկու գլուխները պատրաստելու համար՝ իր տքնաջան աշխատանքները լիութիւն կը բաւեն ցոյց տալու որ Ալիշան յոգնութիւն չըճանչցող գիտնական դէմք մըն էր:

Աւելի հետաքրքրականը այս բոլորին մէջ, անշուշտ, կը կազմէ տեղագրութիւնը (topographie): Այս ուղղութեամբ Ալիշանի կատարած աշխատանքը ոչ թէ հոյակապ, է, այլ գերաստիճան չափով՝ հիանալի: Կրնաք նկատել թէ ներկայիս Կիլիկիոյ պատմութիւնը գրողներէն շատերը տեղագրական շփոթութեանց մէջ կը գտնուին: Ծանօթ Անաւարդայի բերդը ցոյց կու տան Սիսէն դէպի հիւսիս արեւմուտք, թեւ Համտունը՝ Միսիսի մօտիկ, Արքակաղնին Կարոպաղարի քովը, եւայլն: Ասոնց նման շատ մը յայտնի վանքեր ու բերդեր տեղէ տեղ կը փոխադրուին. մինչ Ալիշան մարդարէական շունչով գէթ ամենամօտ տեղ մը կ'առաջնորդէ ընթերցողը, ուր կրնայ հաւանականութիւն ունենալ նման բերդի մը կամ վանքի մը գտնուելը:

Երբ կը խօսի Սկեւոյ վանքի մասին,

կ'ըսէ «առնթեր անմատոյց բերդին Լամբրոնի» եւ կամ «ընդ մուտ անառիկ բերդին Լամբրոնի»:

Բայց անշուշտ քանի ինք անձամբ հետազոտած չէ այդ վայրերը, չէր կրնար գիտնալ՝ թէ Սկեւոյ վանքը Լամբրոն բերդէն որքան հեռաւորութեան վրայ եւ բերդին որ կողմը կը գտնուի:

Նոյնն է՝ երբ կը խօսի Սաղրուի Ս. Աստուածածին վանքին մասին, ուր փոքր տարիքին Ներսէս Լամբրոնացին ուսած է: Միայն այսքանով կը գոհանայ, ըսելով՝ թէ վանքը Ժեռակոյ դետի ափին վրայ շինուած է, ուր Ներսէս Լամբրոնացիին մայրը Շահանդուխտ՝ ատեն ատեն կ'այցելէր իր որդւոյն, ըսել ուզելով որ վանքը Լամբրոն բերդին մօտերը պէտք է ըլլայ:

Նոյն երեւակայութեամբ կամ մարդարէական շունչով կ'որոշէ Գերքը Մեծ Քար վանքին՝ ուր թաղուեցաւ մեր գիւնադէտը, Մլէհ իշխանը: Համտունի, Սարուանդի քարի, Տարպսակի, Հարունիայի, Ծամընդուի, Պիղուի տեղագրութիւնը՝ Ծամընդուի, գէթ շատ մօտիկ կերպով ցոյց տրուած է: Նմանապէս իր «Այրարատ» հոյակապ գրքով տեղադրած է արդի Հայաստանի անձանօթ տեղերը, որոնցմէ կ'օգտուին Երեւանի այժմու գիտնականներն իսկ, երբ իրենք առիթը ունին այդ շրջանները հետազոտելու եւ աւելի տեղեկութիւններ հաւաքելու:

Խիստ ուշադրաւ է Ծով-դղեակի մասին «Շնորհալի եւ պարագայ իւր» գրքին մէջ արձանագրածը: Երկար ատե-

նէ ի վեր խնդրոյ առարկայ եղած այս Ծովքը՝ Ալիշան մօտաւորապէս հարիւր տարի առաջ արդէն իսկ դտած ու տեղորոշած է. «Ծովքը Մարաշի մօտերը գէպի արեւելք պէտք է ըլլայ: Մինչ շատեր խարբերդի «Կէօլճիւք»ը, եւ Բարդէն Կիւլէսէրեան՝ Այնթապի մօտերը գտնուած «Սօֆ» ըլլալը ցոյց կու տան, սխալմունքի եւ անտրամաբանական եղբակացութեան յանգելով եւ շփոթութիւն յառաջացնելով: Ձէ՞ որ Շնորհալիին հայրը՝ Ապիրատ իշխանը՝ Ծովքը գնած էր Անտիոքի խաչակիր իշխաններէն: Խաչակիրները երբեք չէին գրաւած ոչ Մալաթիան եւ ոչ ալ Խարբերդը, որ կարենային իրր իրենց ստացուածքը դայն ծախել Ապիրատ իշխանին: Այս դէպքը ցոյց կու տայ արդէն իսկ Ալիշանի վերլուծող, քննող պատմագետի փայլուն իմացակաւութիւնը, որ միայն իրեն յատուկ է:

Հ. Ղ. Ալիշան, ուրեմն, ո'չ թէ հաւաքող մը եղած է պարզապէս, այլ եղած է խորունկ ուսումնասիրող մը: Ան պիտի մնայ անմոռանալի եւ անգերազանցելի: Հայկական մշակոյթով զբաղող, հայկական պատմութեամբ պարագող բոլոր գիտնականներուն համար՝ Ալիշանի հոյակապ հեղինակութիւնները պիտի մնան յաւիտենական կոթողներ, որուն պիտի դիմեն շատեր՝ ներշնչուելու եւ օգտագործելու տրուած ծանօթութիւնները, որոնք վիթխարի աշխատանքներու արդինք եղած են:

Յարգա՞նք իր անմոռանալի յիշատակին:

ՏՈՒՐԻ. Յ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ